ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Խաչիկյանին 2019 թվականի մայիսի 22-24-ը Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղելու արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Տիգրան Խաչիկյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ ս.թ. մայիսի 22-24, Ֆրանսիայի Հանրապետություն, քաղաք Ստրասբուրգ

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի Խորհուրդ

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ԵՄ/ԵԽ Արևելյան գործընկերության երկրների համար նախատեսված ԵՄ/ԵԽ համատեղ «Գործընկերություն՝ արդյունավետ կառավարման» ծրագրի շրջանակում իրականացվող «Միջոցառումներ՝ ուղղված Արևելյան գործընկերության տարածաշրջանում տնտեսական հանցագործության կանխարգելմանը և դրա դեմ պայքարին» տարածաշրջանային ծրագրի տեխնիկական կոմիտեի նիստին:

Քննարկված թեմաները՝

ԵՄ/ԵԽ Արդյունավետ կառավարման համագործակցության «Միջոցառումներ՝ ուղղված Արևելյան գործընկերության տարածաշրջանում տնտեսական հանցագործության կանխարգելմանը և դրա դեմ պայքարին» տեխնիկական ծրագրի հանձնաժողովի նիստի ընթացքում իրականացվել է ԵՄ/ԵԽ Արդյունավետ կառավարման տարածաշրջանային ծրագրի գործունեության և արդյունքների ամփոփում (2015-2018 թթ.), վերջինիս հիմնավորման և նոր 2019-2021 թթ. աշխատանքային ծրագրի քննարկում և ընդունում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Խաչիկյանը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով Կոռուպցիայի դեմ պայքարում

Հայաստանի Հանրապետության իրականացրած և ապագայում իրականացվելիք քայլերը, այդ թվում այն միջոցառումները, որոնք նախատեսվում է իրականացնել ԵՄ/ԵԽ Արդյունավետ կառավարման տարածաշրջանային ծրագրի շրջանակներում:

Հայաստանի մասնակցության արդյունքները.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Խաչիկյանը համակարգում է ՀՀ-ում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործընթացը՝ վերջինիս մասնակցությունը վերոնշյալ հանդիպմանը ապահովել է ԵՄ/ԵԽ Արևելյան գործընկերության երկրների համար նախատեսված ԵՄ/ԵԽ համատեղ «Գործընկերություն՝ արդյունավետ կառավարման» ծրագրի շրջանակներում ձևավորված արդյունավետ համագործակցության շարունակականությունը և նպաստել ապագայում նախատեսվելիք ծրագրերի իրագործմանը:

ՀՀ արդարադատության
նախարարի տեղակալ՝

Տիգրան Խաչիկյան

X

Tigran Khachikyan